ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ-ի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը ներառյալ

Բուլղարիայի Հանրապետություն (ք. Սոֆիա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, Ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Արտակ Գալստյան - ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության մաքսային գործառնությունների մոնիտորինգի բաժնի պետ

Հակոբ Գալստյան - ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության մաքսային գործառնությունների մոնիտորինգի բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. **Գործուղման վայրը և ժամկետը՝**

Բուլղարիայի Հանրապետություն (ք. Սոֆիա), 2023թ-ի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 4-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝**
   ԱՄՆ կառավարություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**
   ԱՄՆ կառավարության կողմից նվիրաբերվող նոր տիպի ռադիացիոն հսկողության սարքավորումների տեղադրման, շահագործման, սպասարկման, վերանորոգմանն նվիրված դասընթացներ

5. **Քննարկված թեմաները՝**
   Rapiscan մակնիշի ռադիացիոն հսկողության սարքավորումների կառուցվածքի ուսումնասիրություն, տեղադրում, ստուգաչափում, կարգաբերում, ծրագրային ապահովում: Ենթադրյալ անսարքությունների վերացում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Դասընթացներին մասնակցում էին նաև Բուլղարիայի, Ղրղզստանի, Ուզբեկստանի մասնագետները: Դասընթացները ընթանում էին տեսական և գործնական փուլերով:

Տեղի էր ունենում նաև փորձի փոխանակում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:**

Անմիջական մասնակցությունը միանշանակ ավելի արդյունավետ է փորձի փոխանակման և գիտելիքների ձեռք բերման նպատակով:

Քննարկվող տեսական և գործնական փուլերով ուսումնասիրություններից բացի ձեռք բերվեցին պայմանավորվածություններ հետագա համագործակցության, ծագած խնդիրների համատեղ ուժերով լուծման ուղղությամբ:

Եվ Բուլղարիայի մասնագետների և ԱՄՆ գործընկերների կողմից, Rapiscan մակնիշի ռադիացիոն հսկողության սարքավորումների նկատմամբ հետագա աշխատանքների ապահովման համար տրամադրվեցին մեծածավալ նյութեր, որոնք ստացված գիտելիքների և փորձի փոխանակման արդյունքներում ավելի վստահ և արդյունավետ կկիրառվեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Նման հանդիպումներ պլանավորված է կազմակերպել պարբերաբար:

Ստացված գիտելիքները թույլ կտան մոտակա ժամանակներում ստացվող Rapiscan մակնիշի ռադիացիոն հսկողության սարքավորումների տեղադրումը, կարգաբերումն ու ստուգաչափումները իրականացնել արդյունավետ և սեղմ ժամկետներում, ինչպես նաև հետագա սպասարկումը իրականացնել բարձր մակարդակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արտակ Գալստյան

Հակոբ Գալստյան

07.11.2023թ.